ԿՈՎԿԱՍ ԵՒ ԱՐԱՐԱՏ

Սինայն ի քեզ՝ լեառըն Կովկաս,
Թէ մեծ Թափոր լինել պանծաս,
Բարէ՜, որպէս բարձրիզլուխ
Գերբնակա՜ն դու գուրգուռաս։
Կարծես, ամպրոպք՝ ըստորոտիդ՝
Երկրպագուք են վեհ յարկիդ.
Պարք աստեղաց բոլոր ի խումբ
Քեւ բոլորին ի լոյս յար միշտ։
Ճաճանչ շողշող արեգական
Ի քէ՜ն բղխի,—ո՜հ, տեսարան
Քանի՜ սիրուն, քանի՜ վըսեմ՝
Թո՛ղ զարմանան աշխարհ համայն։

* * *

Բայց մի՛ այդքան դու բարձրանար,
Մի՛ յաղթեսցէ քեզ այն սին փառք,
Մի՛ անընդման և մեծամիտ
Արկցես ըզքեզ յերկնից կամար։
Են քան ըզքեզ վըսեմապանծ
Լերինք բարձունք և ամպամած.
Այո՛ ամպրոպք խորհրդական
Աստեղք զայնս ունին պատած։
Արեգական լոյս ճառագայթ
Ազան քան քեզ՝ մինչ պսակաղարդ
Հիւսէ զնոսա շուրջանակի,
Դու ի խոր կաս սրգոյ խաւար։
Որոց և մինն՝ ո՞չ ապաքէն՝
Մեծ քան ըզքեզ փայլի աստէն՝
Այս Արարատ՝ որ Մարդկութեան
Է որոբան, աստ և Տապան....։
Նուիրական տեղի փառաց,
Զոր ոչք տեսին հանուր Նոյեանց,
Որում յակճիռս կան տիեզերք
Տեսեալ զգաղտնիս բնութեան դիպաց։
Նուիրակա՜ն և Հայկազանց
Ի սիրտս տածէ սէր բազմաբազձ.
Որոց միշտ յար քան ըզԿովկասդ՝
Է անձկալի այս Արարատ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՀԱՑ—ԷՋԳՈՒԹԻՒՆ

Բոլոր նիւթաւոր գոյացութեանց մէջ աբբայական շքեղ պատուանունը կսեփհականէ մարդն. վասն զի [illegible]կիշխէ նա իբրև տէր միւս գոյութեանց վերայ, [illegible]առնու ի կիր և կընէ զայնս՝ դիտելով նոցա իւրաքանչիւրոց տարբը, նոցա ամենայն մի յատկութիւններն և պիտանաւորութիւններն բընութեան մէջ. մարդոյ բարձր նշանակութեան արժանաւորութիւնը կապացուցանեն նաև դարերի շրջաններն, որոց մէջ ամենայն մի մարդկային մեծագործութեանց հետքը խորհրդաւոր պատկերներ են, ամենայն մի հետք մարդոց՝ բնութեան վերայ գործած ազդութեան և ներգործութեան կանգուն կոթողներ և անջնջելի յիշատակարաններ կներկայացնեն ապագայ սերնդոց։ Ապա աւելի ևս նշանաւոր է մարդկութիւն, որոյ անբաժան մասունքն կկազմեն համբէն մարդիկ, և որոյ առաջին պարունակութիւնն է մարդ անուան ճշգրիտ և սրբազան յատկութեանց միաւորութիւն։ Եթէ անբաժան և անլուծանելի բաղադրութիւն ունի այս միաւորութիւն, ապա և ամենայն մի վայրկեան մարդկութիւնն աստիճանաբար և անսայթաք կատարելագործութեան սուրբ տաճարների մարմարիոնեայ աստիճաններից ի վեր ի վեր թեւակոխելու յոյս կունենայ, որոնք պիտի առաջնորդեն նորան դէպ ի անվերջ և անդադարդ երջանկութեան հրաշալի պարտէզը, և մարդկութիւն կընդունէ այս յուսոյ իրագործութիւնը, եթէ ամենայն ոք ըստ իւր կոչման և կարեաց գործունէութեան լայնադիր ասպարէզի մէջ գուն գործէ դէպ ի յառաջ քայլեր արձակելու։ Մարդկութեան որոշ որոշ մասունք կբաղկացնեն նաև իւրաքանչիւր ազգութիւն, որոնք և կորոշուին միմեանցից լեզուի և կրօնի տարբերութեամբ։ Ամենայն մի անհատ եթէ կճանաչէ զինքն՝ կճանաչէ զԱզգութիւն, եթէ կճանաչէ Ազգութիւն՝ կճանաչէ և մարդկութեան իրև ի մի ամբողջու-